

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳՎՈՒՄՏԵԱՆ ԵՒ ՆՈՒՊԱՐԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ՝
1988 ՏԱՐԻՈՅ ԹԻՒ 260
ԱԶԽԱՐԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹ ԵՒ ՎԱԿԵՐԱՅՈՒԹ
ԿԱՆՈՆԱԳՐԵՐՈՒՄԸ ՄԱՍԻՆ

ԳԱՀԻՐԷ, Օգոստոս 2011

ՏԵՌԵԿԱԳԻՐ
ԳԱՅԻՄԱՏԵԱՆ ԵՒ ՆՈՒՊԱՐԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ՝
1988 ՏԱՐԻՈՅ ԹԻՒ 260
ԱԶԽԱՐԱՐԱԿԱՆ ՈՐՈՇԱՆԱԳՐԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱԿԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐՈՒՄԻ յԱՍԻՆ

ԳԱՀԻՐԷ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ներկայ գրքոյկով կը հրապարակուի 5 Ապրիլ 1990-ին գումարուած Գահիրէի Թեմական Ժողովին ներկայացուած Գալուստեան եւ Նուպարեան վարժարաններու կանոնագիրներուն վերաբերեալ տեղեկագիրը:

Նկատելի է որ սոյն տեղեկագրին պատրաստութենէն եւ ներկայացումէն ասդին, աւելի քան 20 տարիներ թաւալած ըլլալով հանդերձ, ան կը պահէ իր այժմէականութիւնը եւ կարեւորութիւնը:

Այժմէականութեան մասին խօսելով, հարկ է նշել թէ՝

Ա.- Հակառակ քսան տարի առաջ երկու վարժարաններուն միացման դէմ դրուած նախարարական արգելքին, Գալուստեան եւ Նուպարեան վարժարաններու միացման Դեկտեմբեր 2005-ին սկսած գործընթացը կը շարունակուի եւ, գոյութիւն ունեցող օրինական ու վարչական բազմաբնոյթ դժուարութիւններով հանդերձ, վստահ ենք որ ներկայ ազգային իշխանութիւնը ի վերջոյ պիտի յաջողի իրագործել այդ միացումը:

Հաշուի պէտք է առնել որ այս անգամ տիրող պայմանները տարբեր են: Արդարեւ, Գալուստեան վարժարանի աշակերտութեան թիւը տարուէ տարի նուազելով, 2010-11 տարեշրջանին հասած էր -ի, ինչ որ երկու վարժարաններու միացումը անյետաձգելի անհրաժեշտութեան կը վերածէ: Միւս պարագան այն է, որ Գալուստեան վարժարանի թաղամասը, իր մէջ պարփակուած բազմաթիւ շինութիւններ

րով, ենթակայ է ապաստփականացման՝ որպէս նախաքայլ շուտով գործադրելի զբօսաշրջիկային եւ քաղաքաշինական հսկայ ծրագրի մը:

Բ.- Ձոյգ վարժարաններու միացումին առիթով դա՛րձեալ պիտի վերամշակուի նոր կանոնագիր մը, որուն մէջ ամէն գնով հարկ է պահպանել հայերէն լեզուի ներկայ կարգավիճակը, որուն ձեռքբերումին պարագաներուն մասին մանրամասն լուսաբանութիւններ տեղ գտած են տեղեկագրին մէջ:

Գ.- Տեղեկագրին կարելորութեան մասին խօսելով, հարկ է նշել թէ 1975-ին կազմուած համագործակցական ազգային իշխանութիւնը (Առաջնորդ եւ Թեմական Ժողովի անդամներ) վերջին տասնամեակէն սկսեալ հերթական սերնդափոխութեան մէջ է եւ այս բնական գործընթացը յառաջիկայ տարիներուն եւս պիտի շարունակուի:

Հետեւաբար, անհրաժեշտ է որ թէ՛ նոր եկած եւ թէ՛ յառաջիկային գալիք պատասխանատուները տեղեկանան մեր ազգային վարժարաններու վերջին քանի մը տասնամեակներու անցած ուղիին մասին եւ անցեալի փորձէն մեկնելով՝ ճիշդ հունի մէջ պահեն եւ զարգացնեն հայեցի դաստիարակութիւնը:

Այս տեղեկագրին հրապարակումը կարելոր է նաեւ անով, որ ան կրնայ օժանդակել ազգային իշխանութեան երեց անդամներուն եւ ընդհանրապէս հայ հասարակութեան մօտ յիշողութիւնները թարմացնելու:

Արդարեւ, նկատուած է որ հարցերը կը յիշենք իրենց ընդհանուր գիծերուն մէջ, սակայն յաճախ մեզմէ կրնան վրիպիլ անոնց կարելոր մանրամասնութիւնները:

* * *

Այժմ երկու խօսք տեղեկագրին պատրաստութեան պարագաներուն մասին:

Գահիրէի զոյգ վարժարաններուն կանոնագրութիւններուն պատրաստութեամբ զբաղող անձերը իրենց առաքելութիւնը աւարտած կը նկատէին Դեկտեմբեր 1989-ի ընթացքին երկու վարժարաններու կանոնագրերուն վաւերացումով, առանց, սակայն, այդ մասին տեղեկագիր մը ներկայացնելու: Եգիպտահայոց նախորդ առաջնորդ հոգեւոյս Զաւէն Արք. Չինչինեան, Թեմական Ժողովի վերոյիշեալ 5 Ապրիլ 1990-ին գումարելի նիստէն շուրջ երկու շաբաթ առաջ տողերս ստորագրողին հետ կապ հաստատելով, փափաք կը յայտնէր որ ան Քաղաքական Ժողովին անունով ներկայացուելիք տեղեկագիր մը պատրաստէ եւ այդ ուղղութեամբ կը դրկէր իր կողմէ պատրաստուած 22 Մարտ 1990 թուակիր «ուղեցոյց»ը, որուն պատճէնը տեղադրուած է ներկայ գրքոյկին էջ 6-ին վրայ:

Տեղեկագիրը պատրաստուեցաւ տուեալ ժամանակամիջոցի ընթացքին եւ Քաղաքական Ժողովին անունով ներկայացուեցաւ Թեմական Ժողովի նշեալ նիստին, ուր դրական ընդունելութիւն գտաւ բոլորէն:

Պերճ Թերզեան



۱۷۹ شارع رمسيس بالقاهرة - ۱۳۸۵
صندوق بريد ٤٨ الفجالة

ԽՈԱԶՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
PATRIARCAT ARMÉNIEN

القاهرة في 22 مارس 1990

Le Caire, le

179 Ave. Ramsès, Le Caire - Tél. 901385

B. P. 48 Faggala

No. 94 رقم

Հինգշաբթի, 5 Ապրիլ 1990-ին կայացած թեմական ժողովի

Համար պատրաստուելիք տեղեկագրի համար ուղեցոյց

- 1- Գիշերի պատճառները որոնք առիթ տուին Գալուստեան - Գուպարեան վարժաբաններուն անջատման:
 - 2- Շօշափելի ի՞նչ տարբերութիւններ ունին նախկին և սրբի կանոնադրերը վարժաբաններուն:
 - 3- Հարցերն լեզուի պարտադիր դարձա՞ւ, ի՞նչ կերպով:
 - 4- Պատմականը զանազան տեսակցութիւններու պետական անձերու հետ, յիշելով այն դժուարութիւնները որոնց հանդիպեցանք այս դժուարին գործը յաջողցնելու ընթացքին մէջ:
- Նախկին յայտ շնորհակալութեամբ

Բարսեղ Զարեան-ԹԻԲ
Զ. Թ. Զ. Զ. Զ.

Առաջնորդարան Հայոց

Գահիրե, 22 Մարտ 1990

Թիւ 94

Հինգշաբթի, 5 Ապրիլ 1990-ին կայանալիք Թեմական Ժողովի
համար պատրաստուելիք տեղեկագրի համար ուղեցոյց

1.- Յիշել պատճառները որոնք առիթ տուին Գալուստեան-Նուպարեան վարժարաններու անջատման:

2.- Շօշափելի ի՞նչ տարբերութիւններ ունին նախկին եւ արդի կանոնագրերը վարժարաններուն:

3.- Հայերէն լեզուն պարտադիր դարձա՞ւ, ի՞նչ կերպով:

4.- Պատմականը զանազան տեսակցութիւններու պետական անձերու հետ, յիշելով այն դժուարութիւնները որոնց հանդիպեցանք այս դժուարին գործը յաջողցնելու ընթացքին մէջ:

Կանխայայտ շնորհակալութեամբ

Զաւէն Արքեպսկ. Չ[ինչիւնեան]

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԱՐԽՍԵԱՆ ԵՒ ՆՈՒՊԱՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ՝ 1988 ՏԱՐԻՈՅ ԹԻՒ 260 ԱՆՈՒԱՐԱՐԱԿԱՆ
ՈՐՈՇՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՎԱԿԵՐԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆՈՆԱԳՐԵՐՈՒՄ ԺԱՍԻՆ

Պատկառելի Թեմական Ժողովը իր 16 Դեկտեմբեր 1988-ի նիստին կազմած էր յատուկ Յանձնախումբ մը, պաշտօն յանձնելով անոր, որ Պատուարժան Քաղաքական Ժողովին հետ գործակցաբար զբաղի Գահիրէի զոյգ ազգային վարժարաններուն վերաբերեալ կարգ մը վարչական հարցերով, ի մասնաւորի կրթական նախարարին 1988 տարւոյ թիւ 260 նախարարական որոշմնագրին հիման վրայ, զոյգ վարժարաններուն կանոնագրերուն վերամշակումով:

Սոյն Յանձնախումբին անդամ ընտրուեցան թեմական Ժողովէն հետեւեալ երեսփոխանները.

Տեառք Թէրզեան Պերճ
 Մազլումեան Տօքթ. Գէորգ
 Պալաեան Մարտիկ
 Պօղոսեան Տիգրան

Գահիրէի Թեմական Ժողովը, յետ երկարատեւ քննարկումի, 29 ապրիլ 1983-ի իր նիստին, 1981-ի թիւ 139 կրթական օրէնքի հրապարակումին առթիւ, վարժարաններուն ներքին կանոնագիրները վերամշակելու 1982-ի թիւ 70 նախարարական որոշմնագրին առ ի գործադրութիւն, կը վաւերացնէր Գահիրէի

Գալուստեան եւ Հելիոպոլսոյ Նուպարեան վարժարաններուն ներքին կանոնագրերու վերամշակեալ նախագիծը, զայն յղելու կրթական նախարարութեան մարմիններուն առ ի վաւերացում:

Այս առիթով Թեմական Ժողովը, նկատի առնելով մեր զոյգ վարժարաններու աշակերտութեան թիւին յարաճուն նուազումը եւ այդ երեւոյթին ստեղծած կարգ մը կրթական, գործնական եւ պիւտճեական դժուարութիւնները, յարմար գտած էր Հելիոպոլսոյ Նուպարեան վարժարանը միացնել Գահիրէի Գալուստեան վարժարանին, ստեղծելով միակ կրթական հիմնարկ մը, որ այնուհետեւ պիտի ունենար Գալուստեան-Նուպարեան միացեալ անունը եւ Գահիրէի վարժարանը – նախկին Գալուստեան – պիտի վերակոչուէր Գալուստեան-Նուպարեան Պուլաքի մասնաճիւղ, իսկ Հելիոպոլսոյ վարժարանը – նախկին Նուպարեան – պիտի վերակոչուէր Գալուստեան-Նուպարեան Հելիոպոլսոյ մասնաճիւղ:

Ձոյգ վարժարաններուն վերամշակուած ներքին կանոնագրերը, բաւական երկար յապաղումէ յետոյ, վերոնշեալ ձեւով կը վաւերացուէին պատկան կրթական շրջաններու կողմէ:

Թեմական Ժողովին կողմէ գաղութին ընդհանուր շահին համար առնուած այս իրատես եւ հեռատես որոշումը դժբախտաբար խնդրոյ առարկայ դարձաւ գալուստեան վարժարանի փոքրաթիւ նախկին եւ ներկայ աշակերտներու ծնողներուն կողմէ, որոնք միջոցներու միջեւ խտրութիւն չդնելով եւ Գալուստեան վարժարանի շահերը պաշտպանած ըլլալու խաբկանքով, դիմեցին կրթական նախարարութեան զանազան մարմիններուն եւ նոյնինքն կրթական նախարարին՝ Ազգային Առաջնորդարանին եւ ազգային իշխանութեան անդամներուն հասցէին եղած զանազան անհիմն ու խիստ վտանգաւոր ամբաստանութիւններով, որոնք կրնային միայն վնաս հասցնել մեր զոյգ կրթական յարկերուն եւ

մտքերու շփոթ յառաջացնել կրթական նախարարութեան թէ մեր համայնքի զաւակներուն մօտ:

Իրերայաջորդ անհատական թէ հաւաքական բողոքներու շարքին, ամենավտանգաւորը կարելի է համարել 17 Փետրուար 1987-ին 8 հոգիէ ստորագրուած բողոքը՝ ուղղուած կրթական նախարարին եւ նոյն ատեն ղրկուած կրթական նախարարութեան եօթը տարբեր տնօրէնութիւններուն, ինչպէս նաեւ Գալուստեան վարժարանի տիրոջ ներկայացուցիչին եւ տնօրէին:

Սոյն բողոքին մէջ, բողոքարկուները բազմաթիւ անճիշդ վերագրումներու շարքին, Ազգային Առաջնորդարանի սեփականութիւնը եղող բազմաթիւ կալուածները կը ներկայացնէին որպէս Գալուստեան վարժարանի ի նպաստ եղած կտակներու արդիւնքներ:

Բողոքարկուներէն մէկը աւելի առաջ երթալով, վերել յիշուած 17 Փետրուար 1987-ի բողոքին կցուած 18 վաւերաթուղթերէն մէկուն մէջ, Գահիրէի կառավարչութեան կրթական հարցերու պետական ենթաքարտուղարին ուղղուած յուշագրին մէջ, ի միջի այլոց կըսէ, թէ Ազգային Առաջնորդարանին նպատակն է **«Հակառակ օրէնքին եւ առանց հաշուի առնելու կտակներուն տրամադրութիւնները եւ համայնքին զաւակներուն շահերը բոլոր կտակները – վագրֆները – փոխանցել Ազգային Առաջնորդարանին անունին, որպէսզի Քաղաքական Ժողովին – Մակլիս Իտարա – անդամներուն առաւելութիւնները աւելնան»**:¹

Նման բողոքներու արդիւնքը բնականաբար չէր կրնար կրթական գործին ի նպաստ ըլլալ եւ Ազգային Առաջնորդարանը ստիպուած կըլլար երկար բացատրողական եւ լուսաբանական աշխատանքի սկսիլ Կրթական նախարարութեան մօտ:

Այսպէս, կրթական նախարարութեան Գահիրէի արեւմտեան

¹ Բողոքին կցուած թիւ 16 վաւերաթուղթ, թիւ 3 պարբերութիւն:

շրջանը, 25 Նոյեմբեր 1987 իր թուակիրով, Գալուստեան վարժարանի տնօրենության կը տեղեկացներ, թէ իբրեւ հետեւանք կարգ մը ծնողներու կողմէ կրթական նախարարին ներկայացուած բողոքին, նախարարը հետեւեալը նօթագրած է բողոքին վրայ.

«Ձոյգ վարժարանները պահել իրենց առկայ վիճակին մէջ եւ անոնց մասին որեւէ քայլի չդիմել, մասնաւորաբար ինչ կը վերաբերի անոնց կանոնադրերուն, առանց իրմէ անձամբ արտօնութիւն առնելու, եւ այս մասին տեղեակ պահել վարժարանն ու Առաջնորդարանը»:

Ստեղծուած այս կացութեան դիմաց, Առաջնորդ Սրբազան Հայրը կրթական նախարարէն ժամադրութիւն մը խնդրելով, վերջնոյս հետ տեսակցութիւն մը կ'ունենայ 23 Դեկտեմբեր 1987-ին, ի ներկայութեան Առաջնորդարանի խորհրդատու Տիար Կիրկիս Տոսի:

Այս տեսակցութեան մասին Առաջնորդ Սրբազան Հայրը 16 Դեկտեմբեր 1988-ի Թեմական նիստին ընդարձակ զեկոյց մը տալով, կը յիշէր թէ նախարարը տարբեր աղբիւրներէ լսած է, թէ Գալուստեան վարժարանը պիտի վաճառուի եւ վաճառքին փոխարժէքը արտասահման փոխանցուի, հետեւաբար, նախարարը պահանջած է Առաջնորդ Սրբազան Հօրմէ, որ երկու վարժարաններու անունները մնան, ըստ առաջնոյն, իրարմէ անջատ:

Առաջնորդ Սրբազան Հայրը այս տեսակցութեան յաջորդող օրերուն կրթական նախարարութեան կը յանձնէ հաստատագիր մը, ըստ որուն Գալուստեան եւ Նուպարեան վարժարանները պիտի մնան իրենց անուններով եւ Գալուստեան վարժարանը պիտի մնայ իր ներկայ վայրին մէջ ընդմիշտ:

Նախարարին հետ տեսակցութեան ընթացքին Առաջնորդ Սրբազան Հայրը վերահասու կ'ըլլայ թէ նախարարութեան օրինական հարցերու վարչութիւնը, քննելով 17 Փետրուար 1987-ի

նախապես յիշուած կարգ մը ծնողներու բողոքագիրը, յուշագիր մը պատրաստած է այդ մասին:

Սրբազան Հայրը առարկած է, թէ ինչպէս կարելի է առանց Ազգային Առաջնորդարանին կարծիքը եւս լսելու, ներկայացուած բողոքը քննարկել եւ կարծիք կազմել:

Այս իրաւացի առարկութիւնը նկատի առնուելով, կրթական նախարարութեան օրինական հարցերու վարչութենէն քննիչ մը Ազգային Առաջնորդարան գալով, քննած է վարժարաններու վերաբերեալ վաւերաթուղթերը եւ լուսաբանուած ի մասնաւորի սեփականութեան շուրջ յարուցուած հարցերուն մասին:

Սակայն, այս քննութեան արդիւնքին մասին մինչեւ 16 Դեկտեմբեր 1988 – այսինքն շուրջ 11 ամիս յետոյ – որեւէ տեղեկութիւն ստացուած չըլլալով, Վարժարաններու Յանձնախումբը Առաջնորդ Սրբազան Հօր ներկայութեան, 19 Դեկտեմբեր 1988-ին իր անդրանիկ հանդիպումը ունենալով, որոշեց ամենէն առաջ տեղեկութիւն ձեռք բերել կատարուած օրինական քննութեան արդիւնքին մասին:

Այս ուղղութեամբ Յանձնախումբին անդամներէն Պ. Պերճ Թէրզեան եւ Տօթթ. Գէորգ Մազլումեան, 22 Դեկտեմբեր 1988-էն սկսեալ, շուրջ 15 օր շարունակ, բազմաթիւ անգամներ տեսակցեցան նախարարութեան օրինական վարչութենէն Ազգային Առաջնորդարան եկած քննիչին, նախարարութեան մասնաւոր կրթութեան վարչութեան ընդհանուր տնօրէնին, կրթական նախարարութեան Գահիրէի արեւմտեան շրջանի վարչութեան ընդհանուր տնօրէնին, նոյն շրջանի մասնաւոր վարժարաններու տնօրէնուհիին, ինչպէս նաեւ Գահիրէի կառավարչութեան մասնաւոր վարժարաններու վարչութեան տնօրէնին հետ: Այս վերջին երկու տեսակցութիւններուն ներկայ էր նաեւ Յանձնախումբի անդամ Պ. Մարտիկ Պալաեան: Հակառակ երկարատեւ հանդի-

պումներու, կարելի չեղաւ գիտնալ թէ ի՞նչ եղած է նախարարութեան օրինական վարչութեան եզրակացութիւնը ներկայացուած բողոքին մասին: Այսուհանդերձ, այս տեսակցութիւններուն ընթացքին, նախարարութեան մասնաւոր վարժարաններու վարչութեան ընդհանուր տնօրէնը Յանձնախումբին սկիզբը յիշուած երկու անդամներուն յանձնեց 27 Ապրիլ 1988 թուակիր յուշագրի մը օրինակը, որուն մէջ յիշուած էին կրթական նախարարին կարգ մը նկատողութիւնները եւ այդ մասին մասնաւոր վարժարաններու վարչութեան կարծիքը՝ հիմնուած կրթական օրէնքին տրամադրութիւններուն եւ նոյնինքն կրթական նախարարին կողմէ կատարուած նկատողութիւններուն վրայ:

Այս յուշագրին մէջ մասնաւոր վարժարաններու վարչութեան ընդհանուր տնօրէնը մեր զոյգ վարժարաններուն ներքին կանոնագրին նկատմամբ կատարած էր 10 առարկութիւններ, որոնց մէկ մասը զուտ վարչական եւ լուծելի հարցեր ըլլալով զանց կ'առնենք:

Յուշագրին մէջ, մեր ազգային վարժարաններուն դիմագիծին եւ անոնց առաքելութեան էութեան հետ կապ ունեցող հետեւեալ կէտերը յիշուած են.

- ա. Պէտք է վարժարաններուն կանոնակարգերուն մէջ աւելցնել թէ քրիստոնէական կրօնը կը դասաւանդուի միայն քրիստոնէաներուն:
- բ. Ջնջել այն յօդուածը, որուն մէջ յիշուած է թէ աշակերտը հայկական ծագումէ պէտք է ըլլայ:
- գ. Շաբաթական ծրագիրները պէտք է համապատասխանեն պետական վարժարաններու ծրագրերուն: Կարելի է կարգ մը յաւելուածական նիւթեր աւելցնել, պայմանաւ որ անոնք հակասութեան մէջ չըլլան գործադրուող կրթական ծրագրին հետ:

դ. Նկատի առնուած է արձակուրդներու մեծ թիւը, ինչ որ կը մտահոգէ մեզ, որ այդ արձակուրդները կրնան ազդել ծրագրին ընթացքին վրայ: Հարկ է արձակուրդներուն դիմաց յարմար փոխարինում կատարել:

Յուշագրին մէջ յիշուած այս կէտերը յստակ կերպով ցոյց կուտային, որ մեր վարժարաններուն համար 160 տարիներէ ի վեր որդեգրուած համայնքային վարժարանի դրութիւնը վերջ կը գտնէր:

Բնականաբար, մեզի համար յստակ պէտք է ըլլայ, թէ այս քայլերը յատուկ մեր վարժարաններուն համար չէ որ կ'առնուէին, այլ արդէն իսկ գործադրութեան մէջ էին երկրին մէջ գործող բոլոր վարժարաններուն համար, ուր որեւէ խտրութիւն պէտք չէ դրուի, աշակերտը կրօնական կամ դաւանական հիման վրայ ընդունելու վարժարանէն ներս:

Այս պարագան շատ յստակ դարձաւ Յանձնախումբի անդամներուն, երբ կրթական նախարարութեան տարբեր մակարդակի պատասխանատուները, բոլորն ալ անխտիր, դիտել տուին, թէ ինչպէ՞ս վարժարաններու սոյն տազնապին մէջ, զոր կ'ապրի երկիրը, կարելի է խտրութիւն դնել հայ ծագումով եւ ոչ հայ ծագումով աշակերտներու միջեւ, երբ հայ ծագումով աշակերտներ բարձրագոյն ուսման համար դիմում կը կատարեն, ոչ մէկ խտրութիւն կը դրուի զանոնք համապատասխան կրթական հիմնարկներէն ներս ընդունելու:

Հոս պէտք է յիշել, թէ 1981-ի թիւ 138 օրէնքին առ ի գործադրութիւն հրապարակուած 1982-ի թիւ 70 նախարարական որոշմնագրին թիւ 6 յօդուածը ի միջի այլոց կ'ըսէ ... արգիլուած է որ վարժարանին անունը պարփակէ որեւէ բան, որ զգացնէ թէ ան յատուկ է մասնաւոր համայնքի մը կամ տարրի մը ... եւայլն:

Յանձնախումբը իր քննարկումներուն ընթացքին կրցաւ ունենալ Գալուստեան վարժարանին վերաբերեալ 12 Փետրուար 1984 յուշագրի մը պատճէնը, որուն մէջ 1984-ին վաւերացուած վարժարանին ներքին կանոնագիրը ուսումնասիրող պատասխանատու տնօրէնը նախարարութեան ենթաքարտուղարին կը ներկայացնէ վերեւ յիշուած յօդուածին տրամադրութիւնը, ինչպէս նաեւ հայերէն լեզուով կրօն ուսուցանելու եւ հայերէն դասաւանդելու մեր վարժարաններուն մասնայատուկ պարագաները, եւ կը խնդրէ ունենալ հարկ եղած հրահանգները:

Արդ, ինչպէս ծանօթ է, հակառակ օրէնքին վերապահութեան, 1984-ին մեր զոյգ վարժարաններուն կանոնագիրները կը վաւերացուէին հին դրութեամբ, պահելով թէ՛ միայն հայ ծագումով աշակերտներ ընդունելու եւ թէ հայերէն ուսուցանելու պայմանները:

Դարձեալ, պէտք է նշել, թէ կրթական օրէնքին գործադրութեան վերաբերեալ ներկայիս ի զօրու եղող 1988-ի թիւ 260 նախարարական որոշմնագրին թիւ 7 յօդուածը նոյնութեամբ պահած է 1982-ի որոշմնագրին վարժարանի մը համայնքի մը կամ տարրի մը վերապահուած ըլլալու արգելքը:

Տուեալ պայմաններուն տակ, Առաջնորդ Սրբազան Հօր եւ պատուարժան Քաղաքական Ժողովին հետ խորհրդակցելէ յետոյ, որոշուեցաւ հարցը տանիլ Թեմական Ժողովի խորհրդակցական մէկ նիստին, որ տեղի ունեցաւ 18 Փետրուար 1989-ին, Թեմական Ժողովի բոլոր անդամները տեղեակ պահելու ստեղծուած նոր կացութեան մասին եւ նոյն ատեն կարդալու յանձնախումբին կողմէ պատրաստուած յուշագրի մը նախագիծը, որ Ազգային Առաջնորդարանին անունով պիտի ներկայացուէր կրթական նախարարին:

Հետագային, հարկ եղաւ յուշագրին մէջ կարգ մը փոփո-

խութիւններ մտցնել, կրթական ասպարեզին մէջ գործող տարբեր անձերու հետ խորհրդակցելէ յետոյ:

Կը մնար յուշագիրը ներկայացնել կրթական նախարարին եւ մեր վարժարաններու մասնայատուկ պարագան անձամբ բացատրել իրեն:

Արդ, շնորհիւ մեր համայնքի զաւակներէն Պ. Արթո Աւետիսեանի ունեցած կարելոր անձնական կապերուն, կարելի եղաւ կրթական նախարար Տոքթ. Ահմէտ Ֆաթիի Սուրուրէն խնդրուած ժամադրութիւնը փութացնել եւ Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Պ. Արթո Աւետիսեանի եւ Յանձնախումբի անդամ Պ. Պերճ Թէրզեանի, ներկայացաւ կրթական նախարարին:

Նախարարը շատ սիրալիւր ընդունելութիւն մը կատարելով յայտնեց, թէ ինք պատրաստ է իր աջակցութիւնը ընծայելու: Սակայն, նոյն ատեն, դիտել տուաւ, թէ երկրին սահմանադրութեան ոգիին եւ տարրին դէմ է միայն որոշ համայնքի մը վերապահել վարժարան մը:

Պատուիրակութիւնը նախարարին տեղեկացուց թէ ոչ մէկ ձեռով կ'ուզէ սահմանադրութեան հակասող խնդրանքներ ներկայացնել: Խնդրուածը պարզապէս այն է, որ ինչպէս օտար լեզուներու վարժարաններու պարագային, վարժարան ընդունուելու նախապայման դրուի աշակերտին ծնողքին՝ այդ վարժարանին դասաւանդած օտար լեզուին տիրապետումը, նոյն պայմանը ընդունելի ըլլայ հայերէն լեզուին համար, զայն նկատելով օտար լեզու եւ անոր մէջ յաջողիլը՝ կարգափոխութեան նախապայման:

Այս առաջարկը նախարարը բարեացակամութեամբ ընդունելով հանդերձ, դիտել տուաւ, թէ կարելի չէ հայերէն լեզուն կարգափոխութեան նիւթերէն համարել, պետական վկայականներու քննութեանց ներկայացող դասարաններուն համար:

Պատուիրակութիւնը խնդրեց նախարարէն, որ հայերէնը

կարգափոխութեան որպէս նիւթ զանց առնուի պետական վկայականներու քննութեանց ներկայացող դասարաններուն համար, բայց մնացեալ բոլոր տարիներուն համար կարգափոխութեան նիւթ նկատուի:

Նախարար Տոքթ. Ահմէտ Ֆաթիի Սուրուր այս մասին իր հաւանութիւնը տալէ յետոյ, թելադրեց երկու վարժարաններուն բարեփոխեալ կանոնագիրը անձամբ իրեն ներկայացնել, որպէսզի անոնց վաւերացման համար հարկ եղած պաշտօնական քայլերը առնուին:

Այս հանդիպումին ընթացքին եւս, նախարարը վերստին հաստատեց երկու վարժարանները իրարմէ անջատ պահելու իր փափաքը:

Նոյնպէս, պատուիրակութիւնը տեղեկացաւ, թէ սոյն տեղեկագրին սկիզբը յիշուած կարգ մը ծնողներու կողմէ ներկայացուած բողոքագիրը փոխանցուած է վարչական վերահսկողութեան տնօրէնութեան – Ռիզապա Իտարիա – առ ի քննութիւն:

Հետագայ օրերուն, երկու վարժարաններու ներքին կանոնագիրները վերամշակուեցան Յանձնախումբի անդամներէն ՊՊ. Պ. Թէրզեանի եւ Մ. Պալաւեանի կողմէ, համաձայն կրթական նախարարին հաւանութեան արժանացած սկզբունքներուն եւ 1988-ի թիւ 260 նախարարական որոշմնագրին: Վերամշակեալ ներքին կանոնագրերը Առաջնորդ Սրբազան Հօր եւ պատուարժան Քաղաքական Ժողովին ներկայացուելէ յետոյ, բացատրական նամակով մը յանձնուեցան նախարարին գրասենեակի տնօրէնին:

Մինչ այդ, Առաջնորդ Սրբազան Հայրը զոյգ վարժարաններու տնօրէններ ՊՊ. Նշան Վարդեանի եւ Մարտիկ Պալաւեանի, ինչպէս նաեւ նոյն վարժարաններու հայերէն լեզուի պատասխանատու ուսուցիչներ ՊՊ. Յակոբ Համբիկեանի եւ Տիգրան Գէորգեանի հետ խորհրդակցաբար կազմած էր հայերէն լեզուով դասաւանդուող

նիւթերու եւ գիրքերու ցանկը, որ արաբերէնի թարգմանուելէ յետոյ, ներկայացուեցաւ նախարարութեան մասնաւոր վարժարաններու վարչութեան առ ի վաւերացում:

Որոշ ժամանակ յետոյ, զոյգ վարժարաններու կանոնագրերը կրթական նախարարութեան մէջ ուսումնասիրուած եւ նախնական հաւանութեան արժանացած ըլլալով, ՊՊ. Արթօ Աւետիսեան եւ Պերճ Թերզեան կրկին ներկայացան կրթական նախարարին, որ զիրենք կապի մէջ դրաւ նախարարութեան մասնաւոր վարժարաններու վարչութեան ընդհանուր տնօրէնին հետ:

Վերջինս բացատրեց, թէ իր վարչութիւնը փորձած էր գտնել Եգիպտոսի մէջ պաշտօնական հիմնարկ մը, որ կարենար քննել եւ գնահատումի ենթարկել հայերէն լեզուով տրուած նիւթերը:

Սակայն նման պաշտօնական հիմնարկ մը չգտնուելով, կրթական նախարարին թելադրութեամբ որոշուած է որ Ազգային Առաջնորդարանը ինք քննէ եւ պատրաստէ հայերէն լեզուի ծրագիրը եւ հսկէ անոր գործադրութեան վրայ, պայմանաւ որ հաստատագիր մը տայ, թէ այս ծրագիրներուն մէջ գոյութիւն չունի որեւէ նիւթ, որ կը հակասէ եգիպտական աւանդութեանց, սովորութիւններուն եւ հաւատալիքներուն, եւ Առաջնորդարանը նախարարութեան առջեւ պատասխանատու կը համարուի այս հարցին մէջ:

Այս ուղղութեամբ մասնաւոր վարժարաններու վարչութեան ընդհանուր Տնօրէնը կարդաց հինգ կէտերէ բաղկացած 26 Յուլիս 1989 թուակիր նամակ մը, որուն մէջ սակայն, յիշուած էր, թէ հայերէն լեզուն կարգափոխութեան նիւթ չէ:

Պրն. Թերզեան առարկեց այս մասին, ըսելով թէ կրթական նախարարը անձամբ համաձայն գտնուած է հայերէնը կարգափոխութեան պայման նկատելու, զանց առնելով միայն պետական քննութիւններու դասարանները:

Այս մասին կարծիքներու փոխանակումէ յետոյ, ընդհանուր տնօրէնը նամակը կրկին խմբագրեց, աւելցնելով հայերէնի օտար լեզուներուն համահաւասար նկատուիլը, որուն մէջ աշակերտը պարտի առնուազն 40 առ հարիւր նիշ բերել իր կարգը փոխելու համար եւ հայերէն լեզուի մէջ պարտին գործադրուիլ Եգիպտոսի բոլոր վարժարաններուն մէջ գործադրուող սկզբունքները:

Այս հանդիպումէն յետոյ Ազգային Առաջնորդարանը հայերէնով դասաւանդուող նիւթերու վերաբերեալ Առաջնորդ Սրբազան Հօր ստորագրութիւնը կրող հաստատագիր մը յանձնեց կրթական նախարարութեան:

Յաջորդող օրերուն Ազգային Առաջնորդարանը զոյգ վարժարաններուն վերամշակուած ներքին կանոնագրերուն կցելով կրթական նախարարութեան հետ կանոնագրերուն վերաբերեալ կատարուած թղթակցութիւններէն մէկական պատճէն, զանոնք յանձնեց իւրաքանչիւր վարժարանի պատկան շրջանին եւ ուրախ ենք հաստատելու, թէ Գալուստեան վարժարանի կանոնագիրը վաւերացուած է 5 Դեկտեմբեր 1989-ին, իսկ Նուպարեան վարժարանի կանոնագիրը 16 Դեկտեմբեր 1989-ին:

Մեզի համար այս բոլորին մէջ կենսականը այն է, որ մեր վարժարանները թէեւ դադրած են այլեւս զուտ համայնքային վարժարան ըլլալէ եւ նոյն ատեն դադրած են միայն հայ ծագումով աշակերտներու վերապահուելէ, սակայն, շնորհիւ կրթական նախարարութեան բարեացակամութեան, հայերէն լեզուն մեր վարժարաններուն մէջ կը նկատուի համահաւասար օտար լեզուներուն՝ նախապէս մեր յիշած պայմաններով:

Այս բացառիկ կարգադրութեան համար մեր երախտագիտութիւնը կը յայտնենք Եգիպտոսի բարեխնամ եւ ազնիւ կառավարութեան:

Հիմա որ այս իրաւունքը մեզի ազնւօրէն տրուած է, մեզի կը

մնայ գիտակցիլ անոր կաեւորութեան եւ արժեցնել զայն:

Այս առթիւ, հարկ է յիշեցնել, թէ մեր զոյգ վարժարաններուն միացման որոշումը 29 Ապրիլ 1983-ի Թեմական Ժողովի նիստին առնուած ըլլալով, այդ որոշումին փոփոխութիւնը եւս պարտէր Թեմական Ժողովին ներկայացուիլ:

Սակայն, վարժարաններու անուններու անջատման հարցը եւ կանոնագրային փոփոխութիւնները իրենց վերջնական բանաձեւումը գտան Յունիս 1989-ի վերջաւորութեան, որմէ յետոյ ըստ Եզիպտահայ Կազմական Կանոնագրին կարելի չէ Թեմական Ժողովի նիստ գումարել մինչեւ Հոկտեմբերի սկիզբը:

Հետեւաբար, Պատուարժան Քաղաքական Ժողովը, նկատի ունենալով որ այդ փոփոխութիւնը արդէն կը կատարուէր նախարարական հրահանգով, փոփոխութիւնը կատարելով հանդերձ, անոր վաւերացումը կենթարկէր նոր տարեշրջանի Թեմական Ժողովի առաջին նիստին, որ տեղի ունեցաւ 8 Դեկտեմբեր 1989-ին:

Կը մնայ վերջին տեղեկութիւն մը:

Ինչպէս ներկայ տեղեկագրին մէջ յիշուած է, կրթական նախարարը փոքրաթիւ ծնողներու կողմէ իրեն ղրկուած բողոքագիրը փոխանցած էր Ռիքապա Իտարիայի վարչութեան, որպէսզի վերջինս ստուգէ այդ բողոքագրին մէջ եղած ամբաստանութիւնները:

Այդ ամբաստանութիւններէն կարեւորագոյնը այն էր, թէ Ազգային Առաջնորդարանը Գալուստեան վարժարանի Պուլաքի հողին սեփականատէրը չըլլալով, իրաւունք չունի այդ հողին մէկ մասին ապաստեփականացումէն եկած աւելի քան 700 հազար ոսկիի գումարը դրամատան իր հաշիւներուն անցնել, այլ պարտ էր զայն Գալուստեան վարժարանին հաշւոյն անցնել:

Ռիքապա Իտարիայի վարչութիւնը, իր կողմէ գանազան

հետազոտություններ եւ ստուգումներ կատարել յետոյ, թելադրած էր կրթական նախարարութեան տարբեր տնօրէնութիւններուն, Գալուստեան վարժարան այցելելով տեղւոյն վրայ վաւերաթուղթերու հիման վրայ ստուգելու իրողութիւնը:

Այս ուղղութեամբ, կրթական նախարարութենէն եւ Գահիրէի արեւմտեան կրթական շրջանէն – որուն ենթակայ է Գալուստեան վարժարանը – բարձրաստիճան պատասխանատուներէ կազմուած Յանձնախումբ մը քանիցս վարժարան այցելեց, ուր ընդունուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ, Քաղաքական Ժողովի ատենապետ Պրն. Անդրանիկ Մեսրոպեանէ, Քաղաքական Ժողովի անդամ Պրն. Բիւզանդ Բրուտեանէ, Քաղաքական Ժողովի անդամ եւ վարժարանի Հոգաբարձութեան ատենապետ Պ. Նորայր Տէովլէթեանէ, վարժարաններու Յանձնախումբի կարգ մը անդամներէն, ինչպէս նաեւ Առաջնորդարանի խորհրդատու Տիար Կիրկիս Տոսէ:

Այս այցելութիւններուն ընթացքին առաջին առթիւ ներկայացուեցան Ազգային Առաջնորդարանին Գալուստեան վարժարանին հողին սեփականատէր ըլլալու փաստաթուղթերը, նոյնպէս նոյն հողին մէկ մասին ապաստեփականացման առթիւ գանձուած հատուցումներուն Առաջնորդարանին ի նպաստ տրուած դատավճիռներով ձեռք բերուած ըլլալու փաստաթուղթերը:

Ասոնցմէ զատ Քննիչ Յանձնախումբին անդամները, կրթական նախարարութեան օրինական հարցերու տնօրէնութեան քննիչները, ինչպէս նաեւ նոյն նախարարութեան նիւթական եւ վարչական վերահսկողութեան տնօրէնութեան քննիչները ստուգումի ենթարկեցին ազգային տարբեր կտակներու փաստաթուղթերը եւ անոնց կապը Գալուստեան վարժարանին հետ:

Բնականաբար, այս աշխատանքները խիստ կերպով ծանրաբեռնեցին Քաղաքական Ժողովը եւ ընդհանրապէս ազգային

վարչամեքենան:

Բարեբախտաբար, կատարուած բոլոր քննութիւններն ալ ցոյց տուին կտակային յատկացումներուն կանոնաւորութիւնը եւ կը յուսանք, որ բողոքներու թղթածրարը առ այժմ փակուած է:

Մեր սրտագին փափաքն է եւ մաղթանքը, որ հետզհետէ թիւով նօսարացող մեր գաղութին բոլոր անդամները անխտիր, նոյնիսկ եթէ տարակարծիք ըլլան կարգ մը հարցերու մէջ, ձեռք ձեռքի տալով, համերաշխաբար գործակցին եւ ոչ թէ անհիմն բողոքագրեր ներկայացնեն պետութեան:

Մեր վարժարաններուն մէջ հայեցի դաստիարակութեան պահպանումին համար տարուած աշխատանքները եւ անոնց բարեյաջող ելքը արդիւնք էր բոլորին համերաշխ եւ եղբայրական գործակցութեան:

المحرر : بيرج ترزيان

الكتاب : تقرير مقدم في ٥ ابريل ١٩٩٠ عن
لائحتي مدرستي كالوسديان و نوباريان

الناشر : المحرر

الطبعة : الأولى ٢٠١١

المطبعة : المطبعة الافريقية ش.م.م

رقم الايداع : ٢٠١١/١٤٦٥٤

الترقيم الدولي : 2- 230 -716 -977 -978

Report Presented on November 5, 1990
About the by.laws of
KALOUSDIAN and NOUBARIAN SCHOOLS

Cairo – 2011

